Տեղեկանք

Լրացվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 381. Հսկիչ դրամային մեքենայի կիրառության կանոնները

1. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում գրանցված և ՀԴՄ-ի մոդելին ներկայացվող պարտադիր տեխնիկական պահանջներին բավարարող ՀԴՄ- ով:

2. ՀԴՄ-ն տեղադրվում է առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը, իսկ տրանսպորտային միջոցով վաճառք իրականացնելիս կամ ծառայություն մատուցելիս՝ տրանսպորտային միջոցի մեջ (վրա):

3. Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս, պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել ՀԴՄ կտրոն:

ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները).

1) ՀԴՄ-ի կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ.

2) ՀԴՄ կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը).

3) ՀԴՄ կիրառողի գործունեության հասցեն.

4) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

5) ՀԴՄ-ի գրանցման համարը (ԳՀ).

6) գնման (սպասարկման) ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը).

7) գնման (սպասարկման) ժամը.

8) սպասարկող բաժնի համարը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների).

9) ապրանքի (ծառայության) անվանումը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների).

10) գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների).

11) կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում).

12) գնման (սպասարկման) դիմաց վճարման ենթակա գումարները՝ ըստ բաժինների.

13) գնման (սպասարկման) ընդհանուր գումարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

14) ավելացված արժեքի հարկի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների).

15) պատասխանատու անձի (գանձապահի) համարը.

16) ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ).

17) «կանխավճար» գրառումը՝ կանխավճարների ստացման, «Նվեր» և նմանատիպ այլ քարտերի տրամադրման դեպքերում (երբ պարզ չէ, թե այդ դեպքերում ինչ ապրանքներ ձեռք կբերվեն կամ ինչ ծառայություններ կմատուցվեն):

4. Այն դեպքում, երբ նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը բնակչությանը ծառայություններ են մատուցում գործունեության (ՀԴՄ-ի գտնվելու) վայրից դուրս, պարտավոր են գործունեության վայր վերադառնալով անհապաղ՝ ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում, ՀԴՄ մուտքագրել մատուցված ծառայության դիմաց ստացված գումարը, իսկ մեկ օրվա ընթացքում ՀԴՄ-ի կտրոնը տրամադրել կամ փոստով առաքել ծառայություն ստացողին:

5. Արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը դրամական հաշվարկներն իրականացնում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող ՀԴՄ-ով կամ դրան համարժեք (նույն պահանջները բավարարող) համակարգչային սարքավորումներով:

6. Կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների համար սույն գլխին համապատասխան ՀԴՄ-ի կիրառությունը պարտադիր չլինելու դեպքում, տեղադրված և կիրառվող ՀԴՄ-ի միջոցով արձանագրված շրջանառությունը հիմք չէ հարկերի հաշվարկման համար, իսկ այդ ՀԴՄ-ն հարկային մարմնում գրանցումից (գրանցված լինելու դեպքում) հանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և տեղեկացնել իրավասու՝ ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձը հայտը ստանալուց հետո առավելագույնը երեք ժամվա ընթացքում տեխնիկական սպասարկում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետև սպասարկման կենտրոն) տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Սպասարկման կենտրոնը դիմումատուի հայտի հիման վրա, իրավասու ղեկավար անձի կողմից ՀԴՄ-ի անսարքության մասին տեղեկանալուց հետո, առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ստուգում է անսարք ՀԴՄ-ն և անհրաժեշտության դեպքում կազմում անսարք լինելու մասին ակտ: Վերանորոգման աշխատանքների ողջ ընթացքում սպասարկման կենտրոնը, ՀԴՄ կիրառողի պահանջով՝ տվյալ աշխատանքային օրվա ընթացքում, ժամանակավոր օգտագործման համար վերջինիս տրամադրում է ՀԴՄ սարք: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

8. ՀԴՄ-ին, ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, գրանցման և գրանցումից հանման կարգը, շահագործման կանոնները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, *բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:*

9. Արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող ՀԴՄ-ին, ցանցային կապի միջոցներին կամ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և շահագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ հարկային մարմնի հետ համատեղ: